

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՆՐԱՆՏ ՄԱԹԵԻՈՍՅԱՆԻ «ՉԵԶՈՔ ԳՈՏԻ» ՊԻԵՍՈՒՄ

Անկախ սեռի ու ժանրի պարբերությունների հանգամանքից, անգամ կերպարի ընդ-
րության ու կերպավորման յուրահարկությունից, նույնական է մնում հեղինակի գեղար-
վեստական մտածողության ընդհանրության հանգամանքը: Ամբողջական ու նույնական
են իրենց գեղարվեստական մտածողության դրսևորման համակարգում, ինչպես Նովի.
Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Լ. Շանթը, այնպես էլ բոլորը: Թումանյանի սպեղծագոր-
ծության՝ պոեմների, բալլադների, պարմվածքների ու հեքիաթների, բանասպեղծություն-
ների, այդ թվում նաև քառյակների, հրապարակախոսական ու գրաքննական գործերի մեջ
ամբողջական է ներկայանում հեղինակը, նրա պարբեր ժանրերի գործերի հիմքում ենթադր-
վում է մեկ գեղարվեստական մտածողություն, կամ նույն գեղարվեստական մտածողու-
թյան բեկվելն է նկատվում փառասեռ ու փառաժանր արտահայտություն ունեցող գործերում:
Արդ՝ ասվածը նպատակ ունի փաստելու, որ Նր. Մաթևոսյանի սպեղծագործության մեջ
էլ նույն իրողությունն է փաստվում ու դրսևորվում: Դրամատիկական երկն ավելի «պար-
գործ» է դարձնում այդ իրողությունը: Նախա դրամատիկականը դառնում է էպիկական
սպեղծագործության բնութագրական իրողությունը: Ինչպես գրականության պարմու-
թյունն է փաստում, էպիկական-վիպաշունչ սյուժեին ու պարմությանն էլ փորձել են փա-
մատիկական արտահայտություն, որ շատ հաճախ հաջողվել է:

Այս փաստելից կարող ենք առանձնացնել Նր. Մաթևոսյանի դրամատուրգիան, մաս-
նավորապես «Չեզոք գոյի» պիեսը ևս կիսուսգեղարվեստը՝ որպես արձակի (հիմնական «ժան-
րության») պոետիկայի բացահայտման միջոց: Պիեսը, լինելով առանձին ու ինքնուրույն ար-
ժեք, իր ժանրային յուրահարկությունների շնորհիվ, օգնում է արձակի յուրահարկություն-
ները բացահայտելուն:

Ահա և այս իրողությունն ենք փնտրում «Չեզոք գոյի» պիեսի կերպարային համակար-
գի ու արձակի կերպարների միջև, ասելիքի արտահայտության խնդրում, ասելիքի դրսևոր-
ման, գեղարվեստական մտածողության համակարգում ևս այլն:

«Չեզոք գոյի» պիեսում թերևս գրողի դրամատուրգիական «անփորձություն»¹ կամ

1 Գրության հանգամանքների մասին փեն Նր. Մաթևոսյան, Ես ես եմ, Եր., 2005, էջ 299-300. «Մի անգամ, երբ
առիթ ներկայացավ, որ պիես գրեմ...

Մահարու թաղումից գալիս էինք՝ Վարդան Աճեմյանը Վահագն Դավթյանին ու ինձ առաջարկեց պիես գրել,
իր մտքի մեջ Վահագնին վերապահելով, թերևս, հսկողությունը իմ վրա, ինձ՝ գրելը: Վահագն Դավթյանը իրենը
գրեց, ես էլ իմ փորձը արեցի, իմ պիեսը գրեցի՝ «Չեզոք գոյին», որի բեմադրումը փեսնում էի չեխովյան թատրոնի
ռճի մեջ: Նույրը, դանդաղ, գուսպ և ոչ թե թամաշա:

<...>

գեղարվեստական մտածողության պարպադրանքով դրսևորվում է յուրահատուկ մի պայմանաձև՝ «կցկտուր», «թափառիկ» մտածողությունը, «գսպված մի բան»: Թերևս չի դրսևորվում նաև գործողություն՝ դասական իմաստով, որովհետև պարկերված է «չեզոք գոտի»: Ղիկեսն ավելի շուտ «ընթերցման դրամատուրգիա» է, ուրեմն և «լարում»-ը նախ խոսքի մեջ է դրսևորվում:

Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ գրողի արարած գրականության հիմքում ենթադրվում է նրա վերաբերմունքն իր սրեղծածի և նախընթաց շրջաններում արձանագրված խոսքարվեստի նկատմամբ, ասել է՝ մինչ այդ ի՞նչ կա, և ի՞նչ է սրեղծվելու, լինելու, կայանալու: Այս պոսակներից դիտարկելով հայ գրականությունը՝ րեսնում ենք, որ 405 թ. ցայսօր ցանկացած հայ գրող կայացած արժեքների շարքում դիտարկելու է նաև «Աստվածաշունչ» մատյանը՝ որպես համեմատության ու հարաբերման կայուն, հաստատուն եզր, որպես անբավ իմացության ակունք ու հավասար հանգանակ: Իր սրեղծագործության շարժառիթները մեկնելիս մի առիթով Նր. Մաթևոսյանը նշել է. «Գրողը պետք է Աստծո պես մի բան լինի, որ աշխարհ է բացում՝ «ի սկզբանն էր Բանը», գրողը պետք է բան ասի և նրա խոսքի հետ աշխարհ բացվի»²: Մի երկրորդ դեպքում ասվում է. «Գրականությունը Քրիստոս է սրեղծում: Ղուկասը, Նովիանոսը, Մարթեոսը, Մարկոսը Ավետարան էին գրում»³: Գրի և հավասրի փոխպայմանավորվածությունը, այլ կերպ՝ գրի հավասարավոր լինելը ոչ միայն բարձրաձայնվում է Նր. Մաթևոսյանի հողվածներում և հարցազրույցներում, այլև րեղ է գրնում նրա գործերում՝ որպես քրիստոնեական-բիբլիական աշխարհայեցողության արտահայտություն: Մասնավորապես «Տերը» վիպակում է փաստվում. «Մի բան ախր չի կարող պարահել, որ լինի ու հանկարծ չլինի-չկա»⁴: Այս նույն մտքի մի փոփոխակ էլ հանդիպում է «Անձրեւած ամպեր» («Տաշքենդ») վիպակում. «Էս աստծու րակին, ինչի, կա՞ մի բան՝ որ մի անգամ արդեն եղած լինի կամ մի անգամ լինի ու էլ չլինի, ասի չեմ լինում ու չլինի»⁵: Մի երրորդն էլ, ահա, «Չեզոք գոտի» պիեսում ենք հանդիպում, երբ Ճարտարապետի և Վանահոր գրույցի ընթացքում իրար են հարաբերվում պարմությունը (Անին), Սուրբ Գիրքը (ճշմարտությունը) և հայոց մշակույթը.

«**Ճարտարապետ.** Քաղաքամայր Անին չգիտեմ՝ լինելու է, թե չի լինելու, բայց քաղաքամայր Անիի ճարտարապետությունը դարձյալ լինելու է և լինելու է այնպես, ինչպես եղել է:

«**Վանահայր.** Եւ քաղաքամայր Անիում լինելու են սուրբ գրքի ճշմարտությունները և լինելու են այնպես, ինչպես եղել են:

Սկզբում, երբ գրիչը վերցրել էի, մտածում էի՝ երկու-երեք էջի մեջ, այսինքն 5-10 թուղետոմ բոլորը կգան, և ամեն ինչ կծավալվի իրենց մեջ, բայց ցավալիորեն չկարողացա իմ նպատակին հետեւել, դրսից խումբը շար ուշ եկավ, և այլն, չգիտեմ պարճառն ինչ էր, բայց ուզածս չստացվեց:

<...>

Եթե ավելի լուրջ բան ևս ուզում, ուրեմն մի բան, կարծես թե, պիտի գսպվի: «Չեզոք գոտին» ևս այդպես էի ուզում:

² Անդ, էջ 343:

³ Անդ, էջ 119-120:

⁴ Նր. Մաթևոսյան, Տերը, Եր., 1983, էջ 233: Այս գրքից հետագա քաղաքերումների էջերը կնշվեն շարադրանքի մեջ:

⁵ Նր. Մաթևոսյան, Վիպակներ, Եր., 1990, էջ 674:

Ճարտարապետ. Տա Աստված:

Վանահայր. *Եթե քաղաքամայր Անին դարձյալ լինելու է արդեն մեկ անգամ եղածի պես՝ սուրբ գրքի ճշմարտությունները դարձյալ լինելու են արդեն մեկ անգամ եղածի պես»* (Էջ 51) (ընդգծումն իմն է՝ Վ. Փ.):

Մաթեոսյանի ձեռակերպումը նույնական է «Աստվածաշունչ» մաթյանից Ժողովողի մոտքին. «Ինչ որ եղել է, հիմա էլ կա, և ինչ պիտի լիներ, եղել է արդեն» (Ժողովող Գ 15): «Չեզոք գոյքի» պիեսում հնչում է «Յեղեր են եկել, ցեղեր են դարձել, հարսները պառավել են - դու գլուխդ կախ՝ չըխկ, չըխկ...» (Էջ 49) միտքը: Եւ սա ակունք ունի Ս. Գիրքի. «Ազգ երթա, և ազգ գա, և երկիրս միշտ կա» (Ժողովող Ա 4) արտահայտության հետ:

Մեկ այլ անգամ խոսելով ժամանակի մասին, Նր. Մաթեոսյանը փաստում է. «Բիր-լիայի մթնոլորտը, Բիրլիայի գրքերի գործողությունների ֆոնը և իմ ապրած կյանքի ֆոնը նույնն են»⁶: Սակայն իր և իր ապրած ժամանակի մասին խոսքը միևնույն պահին նաև «Աստվածաշունչ» մաթյանի բերած պայմանաձեերի (մթնոլորտը, միջավայրը) ընդհանրականությունն է փաստում, ամենաբարբեր ժամանակների համար բնորոշ լինելը, և սա գրողի աշխարհայացքի արտահայտությունն է:

Նաճախ էլ հանդիպում ենք պատմի ոճավորման՝ բիրլիական շնչով. «Նախորդ Նով-հանները ծնեց նախորդ Եսայուն, նախորդ Եսային ծնեց նախորդ Նայկազին, նախորդ Նայկազը ծնեց Սյրեփանին, որ արդեն նախորդ չէ...»⁷: Ոճավորման մի արտահայտություն էլ բազմաշաղկապությունն է «Աստվածաշունչ» մաթյանի հանգույն. «<...> և Ալիսն պատկած ննջում էր»⁸, «<...> և Ալիսն հանգստանում էր կանգնած» (Էջ 72), «<...> և Ալիսն սկսել էր արածել» (Էջ 72), «<...> իսկ Ալիսն արածում էր» (Էջ 73), «<...> և Ալիսն գլուխը բարձրացրեց ու նայեց երամակին» (Էջ 73):

Մաթեոսյանի սրելծագործական հավաքամբներից է նաև հետևյալը. «Գեղարվեստը նյութի, փաստի, առարկայի ճանաչման ընթացք է: Նորից եմ ասում՝ ճանաչման ընթացք է, այլ ոչ թե արդեն ծանոթի, արդեն ուսումնասիրվածի գեղեցիկ իրագործում»⁹: Սակայն արդեն ծանոթը, ուսումնասիրվածը դառնում են միջոց՝ ճանաչման ընթացքի համար: Այս արեսակերից Նր. Մաթեոսյանի «Չեզոք գոյքի» պիեսում հաճախադեպ են սուրբգրային մեջբերումները, որոնք ունեն կառուցվածքային ու իմաստասկիչ նշանակություն: Պիեսում քաղաբերումները դառնում են յուրահատուկ հանգրվաններ, հենակետեր, որոնց միջոցով հեղինակն իրականացնում է նյութի՝ ինքզինքն առաջադրած «ճանաչման ընթացքը»:

Ասելիքը ճիշտ պարկերացնելուն միավրած՝ նշենք սրելծագործության բովանդակության ընթացքը. Կարինը շարունակ Անիի ավերակներում են ապրում Միքայել վարդապետն ու ճարտարապետ Աբել Արծաթեանյանը՝ դժվար ու անվարձ: Ճարտարապետի Կարինների վաստակը մասամբ գողացվել է, մասամբ էլ չի արժանացել այնպիսի համապատասխան մարմինների ուշադրությանը: Գալիս է մասնագետների մի խումբ՝ գնահատելու ճարտարապետի վաստակը, բայց ի վերջո նրանք՝ վանահայրն ու ճարտարապետը, էլի ապավինելու

6 Նր. Մաթեոսյան, Ես ես եմ, Եր., 2005, էջ 251:

7 Նր. Մաթեոսյան, Երկեր երկու հատորով, հր. 1, Եր., 1985, էջ 50:

8 Նր. Մաթեոսյան, Վիպակներ, Եր., 1990, էջ 72:

9 Նր. Մաթեոսյան, Ես ես եմ, էջ 177:

են իրենց ու իրենց հետը ապրող մարդկանց: Միքայել վարդապետի և ճարտարապետ Աբել Արծաթբանյանի կերպարներն ունեն իրենց նախադրյալները՝ 1901-1918 թթ. Անիի վանահայր Միքայել վարդապետ Մինասյանը և ճարտարապետ Թորոս Թորամանյանը:

«Չեզոք գուրի» պիեսի ռեմարկում Մաթևոսյանը արձանագրում է գործողության քրոնոպոպը՝ «Անի, 1914, հուլիսի առաջին օրերից մեկը» («Փոթորիկ կա օդին մեջ»)¹⁰: Սակայն սրանից առաջ եղել է դարավոր մղձավանջը. «Ո՛վ է այս ժողովուրդը, որ վեց հարյուր տարի – վեց հարյուր՝ ցանկացած յուրաքանչյուր ազգի ու ազգության ելնելու - գործնալու – կայանալու - անցնելու մի լրիվ ժամկետ՝ մի լրիվ կյանք – վեց հարյուր տարի մշակույթի իր օջախը ոչ թե բորբոքելու, այլ անթեղը գոնե պահելու իրավունք ու հնար չի ունեցել, վեց հարյուր տարի մի քարի վրա քար չի դրել, մի անգամ իր համար վանք չի կարկապել, վեց հարյուր տարուց մի թիվ ու թվական չի հիշում, աթարի ու խլկանքի մեջ ծվարած՝ ոչ էն է ողջ, ոչ մեռած ապրել է անտարածության ու անժամանակության մեջ և իր մշակույթի գլխին ոչ մի հովանի ու գուրգուրանք չի տեսել և ընդհակառակը՝ ապրել է թշնամու թշնամական, լավագույն դեպքում՝ կասկածոք, մշտապես՝ թշնամությունից կանաչած հայացքի ներքո»¹¹:

Ուրեմն 1914-ի Անին հայոց պարմության և ապագայի (ենթադրելի՝ ցանկալի կամ պարագրվող) հանդիպարելին է. յուրահատուկ մի հրապարակ, որ վաղվա օրվա թոնչքաղաշուն է լինելու, բայց արդյո՞ք փառքերի ավերականոցը դառնալու է թոնչքահրապարակ: Եւ կամ արդյո՞ք այսպեղից չենք մղվելու հետ՝ մեր միջի և մեր կերպավորած Ագռավաբարը: Պարմության ու ապագայի այս չեզոք գուրին ցանկալի ներկա չէ, բայց դարերով շարունակական է, որից ելք է պետք: Այս դեպքում կարեւորվում է հարցը՝ ի՞նչ է Անին: Իսկ հարցին պարբեր պարասխաններ են հնչում.

ա) «Ինչի համար է Անին – մեր գեղեցկությունը մեզ ցույց տալու համար է Անին» (Անտոն) (էջ 77),

բ) «Եկել ենք հայ Բագրատունիների իշխանական պոռնի բերդաքաղաք Անի, որ եղել է մեր թվագրության տասներորդ դարում, այսինքն՝ մեզանից հազար տարի առաջ, այսինքն՝ հիմա չկա և, բնականաբար, չի լինելու նաև ապագայում, որովհետև երեկ կառուցել են երեկվա համար, վաղը կառուցելու են վաղվա համար, և մի՞ փոխադրեք, խնդրեմ, երեկվա օրը վաղվա մեջ, գուր մի չարչարեք ձեզ էլ, մեզ էլ» (Բահաթրյան) (էջ 82),

գ) «Մենք եկել ենք ճարտարապետության Մեքքա <...> Անին լինելու է Ռուսահայաստանի և Տաճկահայաստանի միացյալ անկախ թագավորության մայրաքաղաքը» (Շվեդով) (էջ 84),

դ) «Անին չի մահացել, Անին մեռցվել է. ամենամեծ խնամքով վերակառուցված Անին ապագայի մեջ ապրում է իր բնական երկար մահը կամ անմահությունը: Դա կլինի ժամանակի և Անիի խաղաղ վեճ, և իրենք կլուծեն իրենց խնդիրը» (Տեր-Մարգարյան) (էջ 89),

ե) «Մեր Անին է, էլի, մեր հին խոսքերն է:

- Դարտարապետն ու կաթողիկոսարանը որտեղ էին՝ որ Անին մեր խոսքերն էր» (գյուղացիները) (էջ 94),

զ) Արգուրինսկու համար էլ Անին իր նախնիների գերեզմանոցն է, ուր կհանգրվանի մահից հետո (էջ 114):

¹⁰ Վ. Թեքեյան, Երկեր, Եր., 1958, էջ 41:

¹¹ Տր. Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև, Եր., 2004, էջ 109-110:

Մյուս կողմից սա փարածական՝ սահմանային չեզոք գոտու փաստում է, հայոց նախա-վերջին (այդ պահին՝ վերջին) մայրաքաղաք Անին Ռուսիո և Օսմանյան կայսրությունների միջև: Սա նաև չեզոք գոտի է հայի և հայի (մշակութապետը և փոքրամասնությունը, բնիկ և օտարության մեջ ապրող, աշխարհիկ և հոգևոր...) միջև:

Այս չեզոք գոտին ընդամենը հիշողության դաշտ է՝ ավերակված, որի գոյության խոր-հուրդը չեն հաստատելու Անիով անցնող – Տաճկաստանի մեկնող խմբերը, ազգի այն որակը, որ «գնաց ծվարվեց կազակ ու համիդյան միասնական որոգայթում»¹²: Պարսիական չեն փողաների խոսքերը.

« - Մենք Հայաստանը չենք, Հայաստանն էնպեղ է:

-Հայաստանը մենք ենք, նրանք փաճկահայերն են:

- Մենք ռուսահայերն ենք, հայերն իրենք են:

- Իրենք փաճկահայերն են, մենք՝ հայերը:

- Մենք էլ ինչ ենք արել, որ հայերը մենք ենք:

- Որ ուրիշ բան չլինի՝ Դավիթը սահմանն անցել է նրանց ազատելու, իսկ իրենք անց-նում են մեզ ազատելու, չեն անցնում» (Էջ 59):

Չեզոք գոտի է և կա նաև սպասման իմաստով: Վերջնական արդյունքում այսպեղ չեն անում ոչինչ՝ իրենց կեցությունը քարշ փախուց գալով: Այս փոսակների չեզոք գոտի կա մարդու կեցության ու ցանկության միջև: Ամենախնդիր ու ճշմարիտ գնահատականը «չե-զոք գոտի» պայմանավորված իրողությանն ու նաև այս օրվան Վանահայր-Ծուռ Տերերի խոսքն է. «Ինչի՞ ես լաց լինում, հարս, ո՞ւմ ես աղոթում» (Էջ 120): Քանզի մեր գոյության ու ժողովրդի պայքարության ընթացքում առկա գոյությունից վեր բան չի եղել. «<...> Ի՞նչ է, եղել, բան չի եղել, միշտ էլ էս է եղել» (Էջ 120): Ասվածը թերևս նախապարաստվել է քարագործ-խաչքարագործ Սիմոնի խոսքով. «Քո փվածը էս խեղճ ասածուն ինչ է, որ իրենից դու բան ես խնդրում: Դու ի՞նչ իրավունքով ես իրենից բան խնդրում: Դու իրեն ի՞նչ ես պահ փվել՝ որ երբ ես ուզում» (Էջ 116): Տալ-առնելիքի միջև սահման կա, որ ձևավորում է ես մի չեզոք գոտի:

Թվում է՝ սա այլ միտումի արտահայտություն է, սակայն նաև այսպես է հաստատվում առասպելի փոփոխության ու «քողազերծման» այն պայմանաձևը, որ արձանագրվեց Չարեն-գի սրբազանության մեջ, Շ. Շահնուրի վերաբերմունքում:

...Այրվում է թուղթը, բայց ոչ գիրքը: Ահա և 1933-ին այրվեց «Գիրք ճանապարհի»-ի համարյա ամբողջ փաթեթակի թուղթը, բայց ժողովածուն թրծվեց ու ամրացավ, որովհե-տև այն հայ ժողովրդի ճանապարհի գիրքն է, թրծվեց, ինչպես կրակով թրծում էին Էպոսի մեր հերոսներն իրենց մարմինը՝ կովից առաջ, ինչպես թրծում էին միջագետքյան մեր հա-րեւանները իրենց կավե պնակիւր-նամակները հավերժությանը գիր ուղարկելիս:

Այրեցին թուղթը, բայց մինչ այդ բոցավառվել էր բանաստեղծ-մարգարեն, ինքնահի-կիզվել, դարձել ճանապարհի լույսն ու պարզամը, ոգու պահապանն ու պայքարության դառը խորհուրդն իմաստավորողը.

Մոլորակի վրա այս խաչարաբդեր,
Աշխարհի սկզբից մինչև վախճանը
Երևի առաջին ժողովուրդն ենք մենք,
Որ կամենանք անգամ - դավաճանել

¹² Անդ, էջ 78:

Անկարող ենք փառքին մեր ու պարսմությանն անցած,-
 Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
 Զարմանալի՝ թեթև, զարմանալի՝ անդեմ՝
 Մերկության պես րկյոր ու անանցյալ...
 Այդ մենք ենք երևի այն ուղիքը հասարակող,
 Որ Նիսիսի առակին հակառակ –
 Պիպի մարմենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝
 Ապագայի դրախտը անարապ...
 Այդ մենք ենք երևի այն հարուստը,
 Որ անցյալի մեր այդ րկյորությամբ հարուստ –
 Պիպի ժառանգենք մեր դարերի կորուստը,
 Որ բոլոր րկյորներին սահմանված է վերուստ...¹³

Ըստ էության այս նույն երկերն է դիտարկվում Նր. Մաթևոսյանի սրեղծագործության մեջ.

«Երբ մենք բարբարոս էինք, իսկ Նունասպանը գիտեր նիզակից ու մարդուց վաշտ կապելու շատ մեծ գաղտնիքը՝ ինչպես մարմններից են բռնացր կապում,- ասում է հույն պարսմիչը,- Նունասպանը չէր ուզում մեզ այդպես վայրենի թողնել, որովհետև ուժեղները միշտ էլ ամենուր են փառապում իրենց բարի մարդություններից, և ահա հունական քառակուսի փաղանգը եկավ ու փրորելով անցավ հայերի աշխարհը արեւմուտքից հայոց արեւելք և արեւելքից հյուսիս և հյուսիսից հարավ և ճամբար խփեց Մշո կապույտ դաշտում: Դա գորավարժության պես հեշտ եղավ, քանի որ վաշտի դեմ վաշտ և բաբանի դեմ պարիսպ չկար: Ե՛ր մեր կավը դեռ թրծած չէր, ե՛ր մեր պղինձն ու բրոնզը դեռ առանձին էին, որովհետև թրծողները կավ էին հունցում, և կռվողները սուր էին կռում Պարսկաստանի համար:

Եւ Մշո դաշտում, բանակապեղում, գիշերապահները բռնեցին մի բարբարոսի, որ պղնձե դանակը ձեռքին սողոսկում էր գորավարի վրանը: Ի՞նչ էր ուզում: Նունաբեն՝ չգիտեր: Մի կարգին սողալ՝ չգիտեր: Դանակ բանեցնել՝ չգիտեր: Ծեծում էին՝ մոլորում էր, մի կարգին բառաչել՝ չգիտեր: Քաջը՝ քաջ չէր, մորթվելիս գալարվեց ու ոռնաց,- ասում է հույն պարսմագիրը:

Այսպես չհասկացված, այսպես թո՛ւյլ, այսպես անհավասար՝ նա երկու հազար հինգ հարյուր փարվա մշուշից ընդառաջ ելավ, և ես րեսա ինձ: Եւ իմ անգործությանը, փափուկ դանակին ու փուխը բազուկին րեր կանգնեցրին» («Թափանցիկ օր»)¹⁴:

«Քո բոլոր ճակարամարտերն այլևս րանուլ են րրված: Քո երկրից հաղթանակ րաբած ոչ մի գորավար չի մեծարվել հաղթակամարով: Ոչնչացվել են կռվողների թո փոքրիկ խմբերը լեռներում ու կիրճերում: Դու ոչ մի հաղթանակ չունես: Քո պարգած սպիտակ դրոշները թշնամու մեջ չեն խաղացրել սրբառուչ հարգանք, և հաշտության թո բանագնացները խեղդվել են թաց հռռռոցի մեջ: Քո երկիր մրել են ոչ թե փաղանգների կուռ սպառնալիքով կորզելու հավասարի թո դաշինքը կամ գնելու թո մեծահոգի չեզոքությունը, այլ թափթփված խուժանի խմբերով են եկել՝ կնիկ, ճարմանդ, կարպետ, ձի խելու, արքա հրդեհելու: Պարա-

13 Եդ. Զարենց, Պոեմներ, բանասրեղծություններ, Եր., 1984, էջ 475-476:

14 Նր. Մաթևոսյան, Նարնարի, երկու հափորով, հր. 1, Եր., 2005, էջ 339-340:

ռուրել են նոր գնդեր գումարելու քո ծրագրերը: Բարձախեղդ է արվել որևէ էլք փնտրելու քո մարմնուրը: Ուրկից որ գուցե հանկեր գրույցի հրեղեն թուրը՝ ճզմել են քո գանգի այդ մասը: Դու ջախջախված բանակի միավոր ես: Դու պիտի այն անես, ինչ անում են պարսկյան բանակները: Պարսկյան բանակները հաղթողների համար կանգնեցնում են իրենց պարսպաշարի հուշասյունը»¹⁵:

Սա անցյալի մեջ է. մեր պարսությունն է: Բայց ես լինելու է վաղվա օրը: Այս սահմանն է ձեռավորում չեզոք գոտին:

Այսբանից հեքո ենք ցանկանում վերադառնալ սուրբգրային քաղաքներումներին, որոնք մեքերվում են «ի պաշտոն»՝ Վանահոր կողմից: Վանահոր կերպարի նախապիպը, ինչպես նշվեց, Միքայել վարդապետ Մինասյանն է: Վարդապետի մասին լավագույնս են արտահայտվել Թորոս Թորամանյանը¹⁶, Լեոն¹⁷, Վ. Նարությունյանը¹⁸, Ն. Պապուխյանը¹⁹ և այլք: Ի դեպ, Թորոս Թորամանյանի նամակներն՝ ուղղված Ն. Մառին, Ն. Մաթևոսյանի կողմից գործածվել են պիեսի կառույցի ամբողջացնելիս: Մասնավորապես. «Նայր սուրբը կփափագի իմանալ հողերու աճուրդի մասին, նորեն կարծես սկսեր են ուրնձգություններ անել այդ մասին. ուստի կուզե ապահովապես գիտնալ, թե պաշտոնապես բոլորովին եր ձգված է, թե ոչ, եթե ոչ՝ գոնե պիտի աշխարհի ինքն վեր առնել օտար ուրնձգություններն ազալ պահելու համար»²⁰: Ծանոթագրություններում նման պարզաբանում է արված. «Անին իբրև պեղական հող ամեն րարի րրվում էր կապալով՝ անասուններ արածացնելու և խոտհարքի համար: Այդ հանգամանքը մի կողմից դժվարացնում էր Անիի հուշարձանների պահպանությունը, մյուս կողմից վանահորը գրկում էր նույն հողերի եկամտից: Նկարի ունենալով վերոհիշյալ վնասները՝ Անիի վանահայրը սրիսկված հաճախ ինքն էր գնում այդ հողերը աճուրդարաններից:

Նկարագայում պրոֆեսոր Մառին հաջողվել է հանել այդ հողերը պեղական կալվածքների նախարարության րնօրինությունից և դնել Կայսերական հնագիտական մասնաժողովի իրավասության րակ, որն իր հերթին նրանց օգտագործման իրավունքը հանձնել էր Անիի վանահայրությանը»²¹: Իսկ Ն. Մառն իր հաշվեկշիռներում նշել է. «Նախապես նրան <Թ. Թորամանյանին> ուժերի ներածին չափով աջակցում էր Միքայել վարդապետը՝ չգայթակղված գիտությամբ և աստվածաբանական րեսություններով և գործազուրկ պահպանելով հավաքը պրակտիկ քրիստոնեական բարոյականությանը. Նայր Միքայելը Թորոս Թորամանյանի հեք կիսում էր հացի վերջին պարառը, բայց հաճախ ևս ինքը՝ բարեկեցի վարդապետը էր մնում առանց հացի պարառի: Ապրելով սառը, չտաքացվող սենյակում՝ անձրեին մինչև կոճերը ջրով լցվող (հեքագայում ես անձամբ եմ ակնապես եղել այդ երևույթին), Թորոս Թորամանյանը հասավ ծայրահեղ աղերալի վիճակի. քաղցում էր օրերով, իսկ ապա դարապարսկեց վերջապես: Մինչ օրս նա դեռ կշարունակեր իր գործը,

15 Անդ, էջ 345-346:

16 Տեն Թ. Թորամանյան, Նամակներ, Եր., 1968:

17 Տեն Լեո, Անի, Եր., 1963, էջ 146:

18 Տեն Վ. Նարությունյան, Թորոս Թորամանյան, Եր., 1984:

19 Տեն Ն. Պապուխյան, Թորոս Թորամանյան, Եր., 2005:

20 Թ. Թորամանյան, Նամակներ, կազմեց և ծանոթագրեց Նազիկ Թորամանյան, Եր., 1968, էջ 30:

21 Անդ, էջ 377:

բայց այնուհետք անհնար էր գործերը շարունակելը, և այդժամ նա գնաց Էջմիածին՝ օգնության ակնկալիքով սրբազան մարդկանց մոտ՝ ավերակ Անիի շրջանում հայտնված»²² :

Առաջին քաղաքներումը Օրինաց Երկրորդ գրքից է և նպատակ ունի հաստատելու հայի քրիստոնեական արևակը և բարոյականությունը, չայլափոխվելը. «Եթե քո Տէր Աստուածը քո առջև ազգեր կոտորի, և դու նրանց երկրին իբրև ժառանգություն ստանալու համար մտնես այդ երկիրն ու նուաճես նրանց, բնակուես նրանց երկրում, ապա զգո՛յժ եղի՛ր, որ քո առջև նրանց կոտորուելուց յետոյ չգնաս նրանց հետքերով, չհետաքրքրուես նրանց կոտորելով ու չասես, թե՛ «այս ազգերը ինչ արել են իրենց կոտորելին, նույնն էլ ես անեմ Տիրոջը»» (Երկրորդ Օրէնք ԺԲ 29-30) և «Ձեր Տէր Աստծու յետեւից գնացէ՛ք, Նրանից երկնչեցէ՛ք, Նրա ասածը լսեցէ՛ք ու Նրան յարեցէ՛ք» (Երկրորդ Օրէնք ԺԳ, 4):

Միայն այնքան է կարևորվում, որ հնչում է եռակի և հնչում է ասես «գեղարվեստական թարգմանությամբ» («վանահայրը <...> կարդում կամ կարդալ է ձեռագնում» (Էջ 49))՝ ամեն անգամ մեկ-երկու բառի փոփոխությամբ.

«Քո տեր աստվածդ քո ճանապարհից երբ կհեռացնի այն ազգերը, որոնց երկրները քեզ ժառանգելու են տրված, և երբ վերացնի և դու ժառանգես նրանց երկրները – չպաշտես նրանց աստվածներին և չպաշտես նրանց պես: Եւ հարցուիտրձ չլինես և չիմանաս նրանց աստվածներին, և պաշտի՛ր քո աստծուն և պաշտի՛ր քեզ նման» (Էջ 49, 49-50, 50): Վանահոր փազնապը ինքնության կորստի փազնապ է, «զգուշացում կռապաշտությունից», որպէսզի չէափոխվի և չկերպափոխվի այս հայապեսակը, այլապես այդ կորստից հետո այլևս չենք ունենալու կորցնելիք ոչինչ, քանի որ «անցյալի մեր այդ փկլորությամբ հարուստ – Պիտի ժառանգենք մեր դարերի կորուստը, Որ բոլոր փկլորներին սահմանված է վերադարձ», և սա ընդհանրականն է, բայց կա նաև գուր անհատականը, եզակին՝ կոնկրետին ուղղված: Այս «փկլորությամբ հարուստ» պայմանաձեռի մեջ կա նաև մարդու խնդիրը, որ այս անգամ հաստատագրվում է Մարթեոսի ավերարանից քաղաքեղծ խոսքով. «Երբ ծոմ պահէք, քորմերես մի լինէք կեղծաւորների նման, որոնք իրենց երեսները այլանդակում են, որպէսզի մարդկանց այնպէս երևան, թէ ծոմ են պահում. ճշմարիտ են ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի՛ր քո գլուխը և լուա՛ քո երեսը, որպէսզի չերևաս մարդկանց որպէս ծոմ պահող, այլ քո Նորը՝ գաղտնաբար. և քո Նայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կը հարուցի քեզ» (Մարթեոս Զ 16-18): Եւ Նր. Մարթեոսյանը, ասես զգալով իր հոգևոր առնչակցությունը Մարթեոս ավերարանին, իր սրեղծած կերպարի, իր կերպավորած Միքայել վարդապետի օգնությամբ վարիացիայի է ենթարկում Ավերարանի խոսքը և չքավարարավելով այդքանով՝ հավելում եւս երկու նախադասություն. «Դու քո ծոմը քորումերես մի պահիր. կեղծավորները հրապարակ են ելնում ավիրված դեմքերով՝ ինչ է թե մարդիկ տեսնեն, որ նրանք ծոմ են պահում: Ճշմարիտ ճշմարիտ են ասում. կեղծավորները ծոմի առեւտուր են անում. նրանք ծոմ են ծախում և կարեկցանք են առնում: Դու քո ծոմին լվա քո երեսը և օծիր քո մագերը և մարդամեջ ելիր կերած-խմածի նման: **Դու քո քորումությունը, մանանեխի հափիկի չափ քո քորումությունը մի հանիր հրապարակ և մանանեխի հափիկի չափ քո քորումությունից հրապարակում վշտի բեռներ**

²² Անդ, էջ 398:

մի կապիր: Նրապարակներում դու վշտի առեւտուր մի արա-վիշտ մի ծախիր եւ կարեկցանք մի առ» (Էջ 55-56):

Ինչպէ՛ս ներկայանալ աշխարհին. չէ՞ որ հայոց միջանկիազարամյա գոյության ընթացքում ըստ էության ծոմ են պահել այս ժողովուրդն ու նրա գավակն ու արվեստագետը²³:

Անգամ հարյուրամյա ծոմապահությունից հետո այս ժողովուրդն իր մեջ ուժ է գրել ապրելու, սրելով ծելու եւ վերսրելով ծելու՝ առանց փրկման, որովհետեւ մանանիսի հարիկի չափ հավաքել ավելի գորել է, քան մանանիսի հարիկի չափ փրկմանը, որովհետեւ ծոմն ու պահեցողությունն էլ անցավոր են, մնայուն է իր սրելով ծածը: Մի քանի այնքան է կարեւորվում, որ էջեր անց նորից է բարձրաձայնվում՝ մեկ-երկու բառի փոփոխությամբ. «Դու քո ծոմը փրկումներս մի պահիր: Մանանիսի հարիկի չափ քո փրկմանդ միջոց դու հրապարակներում վշտի բեռներ մի կապիր» (Էջ 78): Եւ մենակ եւ դու, որ այս անգամ փաստվում է Սաղմոս 11: բաղաբերմամբ. «Իմ սիրած մարդիկ, իմ բարեկամները հեռու են կենում ինձնից եւ ինձ փնտրող չկա եւ ինձ փնտրողները իմ չարակամներն են եւ իմ թշնամիները ողջ են եւ ինձ ապողները՝ շարացած: Մակայն եւ խուլ եմ խուլի պես եւ համրի պես համր եմ եւ իմ բերանում պարասխանի խոսք չկա, զի դու եւ իմ փրկող եւ իմ խոսքի փրկող եւ պարասխանի իմ խոսքը քո բերանում է, փրկող» (Էջ 57):

Զգացողությունների այս շղթան բնորոշ է նաեւ Վ. Տերյանին.

Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,
Երկիրն իմ անբախար եւ աղերսավոր...

<...>

Մեզ չի հասկանա օրարերկրացին,
Մեզ չի հասկանա սառն օրարուհին...²⁴

Եթե մեզ փնտրող չկա, եւ մեզ փնտրողները մեր չարակամներն են, եւ մեր թշնամիները ողջ են, եւ ապողները՝ շարացած, եթե մեզ չեն հասկանում օրարն ու օրարուհին, ապա չեն էլ աջակցում մեզնից օրարվածները.

«Ազգագրականը լուր էր ուղարկել, թե ինձ փրամադրում է, մեծ կամուրջը վերաշինելու համար, հինգ հազար ժուրի փող: Նկոտ պարասխանեցին, թե այս ու այս պարճառներով հինգ հազար չի, հինգ հարյուր է, որը հազիվ թե կամուրջը վերակառուցի, ուստի հարկ չեն համարում ուղարկել, այլ ուղարկում են հինգ ժուրի թողթ» (Էջ 78),

«Գյումրեցի Ղուկասովը բերեց նվիրեց այս գրամոֆոնը եւ չհանգստացավ՝ մինչեւ լրագրով երախտագիտություն չհայրենեցի: Մանթաշովի շավարը թիֆլիսեցիք դրկել են ու սպասում են, որ լրագրով հայրենեմ, թե հազիս շավար չկար, իսկ հիմա կա ձեր ուղարկած շավարը» (Էջ 115):

Իսկ առանձին օրարներ էլ ոչ թե չեն օգնում, այլ թալանում են աշխատանքը.

«<...> քո պրոֆեսորից վարձապարության ոչ մի սպասելիք մի ունեցիր: Իր գործը նա քեզ հետ վերջացրել է շնորհակալությամբ ու հիստոն կրոն փողով: Նիստոն կրոնը, քեզ ի՞նչ ասեմ, մի խոսքով հիստոն կրոնը չի կարելի փոստին հանձնել՝ թե փարեք այսպեղից այնպեղ: Նիստոն կրոնը մի փուփ լավ ծխախոտ է: Բո պրոֆեսորը քեզ կողոպտել է» (Էջ 108-109):

23 Թ. Թորամանյան. «<...> ցուրտն ողորդվ, կարեւոր պիտույքներից զրկվելով, ծանոթներու հյուրասիրության ապաստանած՝ ձմեռն անցուցի»: Մեջբերումն ըստ՝ Վ. Նարությունյան, Թորոս Թորամանյան, Էջ 11:

24 Վ. Տերյան, Երկեր, Եր., 1989, էջ 169:

Բայց պիեսի պայմանականության մեջ մնում է մի փոքրիկ հույս, աջակցության մի փառքերակ. խումբը եկել ու փեղ է հասել՝ քննելու ճարտարապետ Աբել Արծաթբանյանի գործն ու նպաստը նշանակելու նրան («Մի խոսքով՝ թոշակի հարց կա» (էջ 77)): Բայց այս նպաստն էլ ըստ էության ողորմության պես մի բան է, բայց ոչ «ողորմություն՝ գաղտնաբար», այլ ողորմություն՝ թերթում շնորհակալությունը փոխանակելու ակնկալությամբ: Այսպես է հայտնվում Մարթեոսի ավերարանից (Ձ 1-4) մի հարված. «Զգույշ կաց, որ քո ողորմությունը հանկարծ մարդկանց առջև չանես: Եթե ողորմություն ես անելու՝ նախօրոք շեփոր մի հնչեցրու, ինչպես որ կեղծավորներն են ողորմությունից առաջ հնչեցնում ողորմության շեփորը: Քո ձախ ձեռքը թող չիմանա քո աջիդ արած ողորմությունը» (էջ 60-61):

Անգամ այս պայմանականության մեջ կարևորվում է պարզ ու հասարակ, թեկուզ և աղքատ, բայց հպարտ ապրելու խնդիրը: Ապրել՝ առանց ողորմություն ակնկալելու, ապրել՝ քրիստոնեաբար, բարոյական սկզբի գերազանցությամբ: Այս անգամ էլ ապավինելով Մարթեոս ավերարանին (Ձ 24-34)՝ Միքայել վարդապետը («պահպանած գործագութը հավարարմությունը պրակտիկ քրիստոնեական բարոյականությանը», -վերհիշենք Ն. Մառի խոսքը) վանքում մենախոսում է.

««Մարդը չի կարող ծառայել երկու փրկոց, քանի որ մեկին պիտի սիրի և մյուսին ապրի, կամ մեծարի մեկին և արհամարհի մյուսին. ես ձեզ ասում եմ՝ դուք չեք կարող ծառայել միաժամանակ աստծուն և մամոնային: Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում, մի՛ քաշեք ձեր մարմնի հոգսը: Կյանքը չէ՞ որ կերակուրից է ավելի և մարմինը՝ հագուստից: Իր փառավորության մեջ Սողոմոնն իսկ չկարողացավ զգեստավորվել մի հովտաշուշանի պես գեղեցկորեն: Նապա դուք, թերահավատներ, որ դաշտի շուշան չեք...»: Ուրեմն՝ ձեր վաղվա համար հոգսերի բեռ մի սրեղծեք: Ճշմարիտ ճշմարիտ եմ ասում. վաղվա օրի համար հոգսերի բեռ մի կապեք՝ թե ինչ պիտի ուրեմն վաղը և ինչ պիտի խմենք վաղը և ինչ պիտի հագնենք վաղը: Վաղվա օրը ինքը կհոգա իր հոգսը, և այսօրվա նեղությունը բավական է այսօրվան» (էջ 64):

Սակայն այս դեպքում էլ խնդիր կա, որովհետև քո ապրած օրը կասկածի փակ է դնում վաղվա օրվա գոյությունը. այս դեպքում ի՞նչ պարասխանի Միքայել վարդապետը. չէ՞ որ «Վաղվա օրը կհոգա վաղվա հոգսը, այսօրը կհոգա այսօրվա հոգսը, բայց թե մենք պետք է կարողանանք մեր անձը հասցնել վաղվա օր, որպեսզի մեր մարմնի վրա վաղը հոգա իր հոգսը: Այլապես վաղը կհոգա մեր գերեզմանի հոգսը... Ճշմարիտ ճշմարիտ եմ ասում...» (էջ 64):

Խոսքի հմայքն ու ասվածի ճշմարիտ լինելը սրիպում են վերստին արտաբերել այս միտքը (էջ 70)՝ սակայն այս անգամ կենտրոնականում հովտաշուշանի օրինակի վրա. «Նապա մի նայեք հովտաշուշանին, որ ոչ բանում է, ոչ մանում, և ի՞նչ գեղեցկությամբ է նազում» (էջ 70):

Չկա օրվա՝ սեփական գործով ապահովությունը, չկա ողորմությունը, ուրեմն մնում է միակը՝ Աստծուն ապավինելը: Եւ այս անգամ հնչում է Ներսես Շնորհալու խոսքը. «Աստված իմ, որ բանաս գձեռն քո և լուս զամենայն արարածս ողորմությամբ քով, քեզ հանձն առնեմ զանձն իմ, դու հոգա և պարբաստեա զպէսս հոգվո և մարմնո իմո այսուեկտրե մինչև հավիտյան, ամեն» (էջ 73)²⁵:

25 «Գիրք սողմոսաց Դաթի», Երուսաղէմ, 1988, էջ 439: Եւ՝ «Ժամագիրք Նայաստանայց Ս. Եկեղեցոյ»,

Դավթի սաղմոսներին անդրադարձ եղել է, եւ սակայն հեղինակը չի բավարարվել դրանով ու Դավթի «պրպրմության սաղմոսներին» ոգով սրելով է իրենը. «Ճարարարապետը մի լավ սաղմոս է գրել, ուզո՞ւմ ես երգեմ՝ փառավորվեք. «Արելության ժանգն ինձ մաշում է, քո շռայլ բարությամբ, քո շռայլ բարությամբ սեր ցողիր՝ գոծելու իմ ներսի արելությունը սիրով, քանի որ արելության ժանգն իմ ներսում իրեն ուրում ու փչացնում է ինձ...»» (էջ 74):

Մի վերջին անգամ Միքայել վարդապետը սուրբգրային խոսքին անդրադառնում է պիեսի վերջում՝ ամփոփելով ու ամբողջացնելով վերաբերմունքը Կրիի ունեցածին, Անիին, ճարարարապետությանը, պարմությանն ու մարդուն. «Դու քո ծոմը փրկումներես մի պահիր, մանանեխահարկի չափ քո փխրությունից ժողովրդի առաջ վշտի բեռներ մի կապիր... զվարթաղեն, զվարթաղեն, քանզի...» ինչ է եղել, միշտ էլ ես է եղել» (էջ 120):

Եղել են դարերի ճնշումն ու մեկուսացումը, եղել են հայոց պարմության վերելքն ու անկումը, Անիի շքեղ ու զնգուն, հագարագանգ ճարարարապետությունն ու ավերակվելը: Ներկայացվող օրն արարքուսար անդորր է, բայց փազնապաշունչ, բայց եւ կա Անիի ճարարարապետությունը, կա հայ մարդը, կա մշակույթի համար մեծագույն պարասխուսարվությունը, ուրեմն եւ լինելու է վաղվա օրը:

Միքայել վարդապետն ու Արել Արծաթանյանը ըստ էության **մի՛-ա-միտ** են եւ բարձրաձայնում են իրենց կերպարակերպողի աշխարհայացքն ու բարոյական-գեղագիտական սկզբունքները: Նրանք հենվում են ժողովրդի ու մշակույթի ներդաշնակության վրա՝ հասարակելով այս հայաբնակի յուրահարկությունն ու ինքնարկությունը:

Ի վերջո, ծաղկաբաղելով Մաթեոս ավերարանչից, Նր. Մաթեոսյանը Միքայել վարդապետի՝ «Մասնա ծեր» դյուցազնավեպից ելած Ծուռ Տերպերի միջոցով բարձրաձայնում է յուր ավերարանը ձեռակերպելու խորհուրդը, Ավերարան, որ պարակնուն չէ²⁶ եւ ոչ էլ Ավերարան՝ բառի լիակատար իմաստով, այլ գրողական խղճի ու աշխարհայացքի իրացում, վերաբերմունք առ մարդն ու երկիրը, անցյալն ու գալիքը. «Փղշտացիներ, չնահավարներ, թերահավարներ, փարիսեցիներ, ինչո՞ւ եք էդքան լավը <...> Ձեզ համար մի հարուկ, հայացի ավերարան եմ գրելու, քանի որ Բրիտանի ավերարանը ձեզ վրա չի ազդում: Գրելու եմ, որ դուք ամենալավն եք, գրելու եմ, որ ձեզ թույլ եմ փալիս շնանալ, գողանալ, ուրանալ, քանի որ էդ ձեզ չի ասած՝ մի՛ շնացեք, մի՛ ուրացեք, մի՛ գողացեք, քանի որ դուք չեք շնանում, չեք գողանում, չեք ուրանում, քանի որ ում հետ շնանաք, ինչ գողանաք, ինչն ուրանաք, եւ էդպես՝ ձեզ պես, էս շան ու գողի աշխարհում ապրել չի լինի: Գրելու եմ, որ ամբողջ աշխարհի, ամբողջ-ամբողջ աշխարհի, ասածու փակի էս մեծ երկրում խղճի անդրին դրվելու է էս հողին, եւ խղճի անդրին ունենալու է ձեր կերպարանքը»:

Տառապող ու գրանյութ խղճի անդրին ունի այսօր Նրանուր Մաթեոսյանի կերպարանքը, նրա, ով ժամանակի դատը հոլովություններից ու մարդկային ճակարագրերից լո՛յսը երկնեց եւ հավակնում է, իր խոսքով, «կանգնել աշխարհաստեղծման՝ բանավոր լույսի ակունքներում»: Ուրեմն եւ պարահական չէ գերմանուհի Էվա Շրիպմաների միտքը. «Նա <...> պար-

²⁶ Կաղարշապատ, 1902-ՌՅԾԲ, էջ 508: Մաթեոսյանը փոքր չի փվել միայն «**եւ ողորմեա**» վերջին:

26 Ուզում եմ բարձրաձայնել իմ անհամաձայնությունը Բ.Գ.Պ. Նրաչյա Թամրազյանի ներքոն հողվածի վերնագրին միայն. փեն «Ազգ», թիվ 28 (4409), 18.02.2010:

մում է ասարծո, իր լեռների ասարծո պես»²⁷: Այնպես որ, համարձակվենք ասել, որ Նրանր Ահնիձորցին իր խոսքով ու գրով սրելոձեց «Ծմակուրի ավերարանը», «Ավերարան՝ ըսար Մաթեոսյանի»՝ անրառապահից, հյուսնից, հովվից, դպրոցականից ու Ալիտ ձիուց, Մաթիկ գոմեշից ու Նահապալ Կանաչդաշտեցի Կարմիր ձիուց, Մեսրոպ Մոլորվածից ու Իշխան Դեռյանից սրելոձելով իր առաքյալներին, Անհավար Աղունից Աղունիկ Կիրամայր եւ Սեւ Դարաչի Շուշանից Մարիամ Մագթաղենացի երկնելով, մեզ փոխանցելով սիրո, իղձի, բարության, ճշմարտության հունդերը, որոնց արդար ալյուրով թխված նշխարքով դեռ քանի չնչահավար ու փարիսեցի է կերակրվելու ու գալու ճշմարիտ գրականության հավարին...

27 Էվա Շփիրմարեր, Մաթեոսյանի լեզուն, «Գրական թերթ», 14.07.1989, թիվ 29: